

## Գնման ընդհանուր հայտարարություն

**ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ և «ԿԱՆԱԶ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ Հայաստանի Հանրապետությունում**

Հայաստանի Հանրապետությունը Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամից ( այսուհետ՝ ԿԶԵՀ) ստացել է 1 719 200 (մեկ միլիոն յոթ հարյուր տասնինը հազար երկու հարյուր) ԱՄՆ դոլարի դրամաշնորհ՝ « ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ և «ԿԱՆԱԶ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ» զարգացման աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր ) ֆինանսավորման համար և մտադիր է վերոնշյալ դրամաշնորհի հասույթի մի մասն օգտագործել Ծրագրի աշխատանքների և համապատասխան խորհրդատվական ծառայությունների դիմաց, որոնք ձեռք կբերվեն Ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները

**Բաղադրիչ 1. «Հասարակական շենքերում էներգախնայողության միջոցառումներ»**

1	Ծրագրի շրջանակներում աշխատանքներ, որոնք իրականացվում են շահառուների շենքերում
2	Շահառուների շենքերում Ծրագրի ներդրումային և էներգետիկ աուդիտի իրականացում
3	Շահառուների շենքերում իրականացվող Ծրագրի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն

**Բաղադրիչ 2. Շահառուների շրջանում հանրային իրազեկության բարձրացում**

1	Երևանում փորձագիտական հանդիպման կազմակերպում՝ ԿԶԵԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ
2	Հայաստանի ուսումնական հաստատություններում դասընթացների կազմակերպում
3	Մեթոդաբանական և վերլուծական նյութերի մշակում, էներգաարդյունավետության տեղեկատվական միջոցառումների կազմակերպում

**Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում և աուդիտ**

1	Ծրագրի ֆինանսական հաշվետվության աուդիտ
---	--

Գնումները կիրականացվեն դրամաշնորհային պայմանագրով ԿԶԵԿ-ի կողմից՝ համաձայն ֆինանսավորվող ծրագրերի գնումների քաղաքականությանը ( փոփոխության է երթարկվել 2018թ. նոյեմբերի 21-ին), և ԿԶԵԿ-ի կողմից ֆինանսավորվող գնումների ընթացակարգի ( փոփոխության է երթարկվել 2018թ. նոյեմբերի 21-ին), որը հրապարակվել է 2018թ. -ին ԿԶԵԿ-ի կայքում՝ ([https://efsd.eabr.org/about/documents/policies\\_and\\_procedures/](https://efsd.eabr.org/about/documents/policies_and_procedures/)).

Միջազգային մրցակցային սակարկությունների (ՄՄՍ) ընթացակարգով գնումների հատուկ հայտարարությունները, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների մատուցման համար մրցույթներում հետաքրքրվածության հայտը կիրառարակվի Միավորված ազգերի կազմակերպության զարգացման բիզնես (UNDB)՝ (<https://devbusiness.un.org/>), ինչպես նաև ԿԶԵԿ-ի (<https://efsd.org/purchases/>) , Ստացողի և Եվրասիական զարգացման բանկի ԿԶԵԿ-ի միջոցները կառավարող (<https://eabr.org/procurement/>) կայքերում

Մատակարարներն ու կապալառուները, ովքեր ցանկանում են ընդգրկվել ՄՄՍ-ի Հատուկ գնումների հայտարարության փոստային ցուցակում, և այն խորհրդատուները, ովքեր ցանկանում են ստանալ հետաքրքրվածության հայտ՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթներին մասնակցելու համար, ինչպես նաև լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել հետևյալ հասցեով՝

**Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ**

**ՀՀ, ք. Երևան 001, Սայաթ-Նովա 29/1**

**Զարուհի Ղարազյոզյան, +374 10545121, [zaruhi.gharagozyan@r2e2.am](mailto:zaruhi.gharagozyan@r2e2.am)**

[www.efsd.eabr.org](http://www.efsd.eabr.org), [www.mtad.am](http://www.mtad.am), [www.r2e2.am](http://www.r2e2.am)